դողում, սարսափում են թէ հասարակ ժողովուրդները և թէ պետական ստորին պաշտօնեաները։ Նրանք վերջին 30—35 տարուան ընթացքում՝ վերոյիշեալ գիւղերին յատկացուած ահագին տարածութեամբ պետական հողերը խլեցին Հայ գիւղացիներից բռնութեամբ և զէնքի ոյժով և ապա կամաց-կամաց իւրացրին ու սեփականացրին իրենց։ Այս բանի մասին ով որ ձայն հանեց, նրա տունն ու տեղը հրդեհին զոհ գնաց, ով որ իշխանութեան յայտնելու քաջութիւն ունեցաւ, նրան իսկոյն և եթ գնդակահար անելով՝ սպանել տուին։ Ահա այսպիսով, վախ ու սարսափ անելով՝ սպանել տուին։ Ահա այսպիսով, վախ ու սարսափ տարածեցին ամբողջ Ուտիացոց աշխարհում, որ ոչ ոք չհամարձակուի որ և է շշուկ հանել կամ իշխանութեան ականջը լուր հասցնել, որ խաղաղ երկրագործ ժողովուրդը հլու հպատակ և կատարեալ ստրուկ դառնայ իրենց, որպէսզի իրենց փաշայական կամայականութեան, անհուն փառասիրական ձգտումներին կարողանան լիովին բաւարարութիւն տալ։ Կարճ խօսքով, ամբողջ Ուտիացոց աշխարհի բոլոր ազգաբնակութեանց յատգիմութեան, դժբախտութեան և նրանց տընտեսական ու բարոյական աւերման և քայքայման իսկական և միակ պատճառը եղել են և հն Բումի սանձարձակ և անզուսպ թուրք բէկերը։ Որոնք ոչ ցանում են, ոչ հնձում, որոնք ոչ մի արհեստով և առևտրով չեն պարապում։ Բայց նրանցից ամեն մէկը իւր տասնեակ ծառաներով ապրում է ճոխ և փառաւոր կերպով և ամեն տեղ միամիտ ժո-